

ԿԱՐԾԻՔ

ՆԱԲԵԿ ՄԻՔԱՅԵԼԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ «ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1908-1915 ԹԹ.» Է.00.01 «ՀԱՅՈՑ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1908–1915 թվականներին Օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների գործունեությունը համընկնում է կայսրության պատմության բեկումնային շրջանի հետ:

Թեև 1908 թվականին երիտթուրքերին հաջողվեց իրականացնել հեղափոխությունը և վերականգնել սահմանադրական կարգը, սակայն նրանք պատրաստ չէին բազմազգ և բարդ կառուցվածք ունեցող պետությունը ղեկավարել: Նրանք չունեին հստակ ծրագիր և պատկերացում այն մասին, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկեին, ինչպես կառավարեին երկիրը:

Հապճեպության և անպատրաստ կեցվածքի ամենազավեշտալի կողմերը հստակորեն երևում են 1876 և 1908 թվականներին ընդունված Սահմանադրության հոդվածներից:

1876 թվականի Սահմանադրությունը ընդունվել է նույն թվականի դեկտեմբերի 11/23-ին: 70-րդ հոդվածը սահմանում է, որ Երեսփոխանական ժողովի գումարման հաստատված ամիսը նոյեմբերն է, ուստի, ընդհանուր ընտրությունները պետք է իրականացվեն առնվազն նոյեմբերի 1-ից չորս ամիս առաջ (տե՛ս *Սահմանադրություն Օսմանեան, հրատարակեալ 7 զիլհիճճէ 1293 (11/23 դեկտեմբեր 1876), Կ. Պոլիս, Լա Թիւրքի, 1876, էջ 32*): 1908 թվականի Սահմանադրությունը ընդունվել է հուլիսի 11/24-ին: 70-րդ հոդվածը կրկնվում է նույնությամբ (*Սահմանադրության բնագրի թարգմանությունը տե՛ս Կոչնակ, Օգոստոս 15, հմր 33, Ը. տարի, յաւելուած կոչնակի, Պոսթոն, 1908 թ.*): Հետևաբար ստացվում է, որ նախքան Սահմանադրության հրապարակումը և դրա ուժի մեջ մտնելը, նույնիսկ նախքան հեղափոխություն իրականացնելը, անհրաժեշտ էր կազմակերպել երեսփոխանական ընտրություններ, որպեսզի նոյեմբերի 1-ին խորհրդարանը պատրաստ լիներ:

Նարեկ Մարտիրոսյանի՝ «Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը (1908–1915 թթ.)» թեմայով ատենախոսությունը վերաբժնորում և վերլուծում է հետհեղափոխական յոթ տարիների ընթացքը՝ ընդգծելով հայ պատգամավորների գործունեությունը, ինչպես նաև մատնանշելով նրանց սխալներն ու թերացումները:

Ատենախոսության էջերում՝ երեսփոխանների և կուսակցությունների կողքին, ակնհայտորեն ընդգծվում է Հայոց Եկեղեցու կարևոր դերակատարումը (էջ

51, 132): 1909 թվականի ապրիլի 1-ին սկսվել են Ադանայի կոտորածները: Ինչպես նշում է ատենախոսը, ջարդերի վերաբերյալ քննարկումները սկսվել են ապրիլի 18-ին (էջ 51): Դրան նախորդել էր վարչապետ Թնֆիք փաշայի և պատրիարքական տեղապահ Հովհաննես սրբազանի հանդիպումը, որի ընթացքում սրբազանը պահանջել էր կազմել քննիչ հանձնաժողով և բացահայտել հանցագործությունների պատասխանատուներին (էջ 51):

Մանրակրկիտ թերթելով 1908-1912 թվականների Օսմանյան խորհրդարանի արձանագրությունները, նկատում ենք, որ 1908 թվականին ընտրված պատգամավորներից ոմանք երբևէ որևէ էլույթ չեն ունեցել: Ավելին, խորհրդարանական քննարկումներում Ադանայի ջարդերը ներկայացված են Ադանայի հայկական խժոժություններ, անկարգություններ (Adana ıg̃tişası - اغتشاشات) եզրով: Այդ եզրի գործածությունը նիստերին առարկության չի հանդիպել: Պատճառն այն էր, որ հայ երեսփոխաններից շատերը չէին հասկանում, թե ի՞նչ են խոսում, ինչի՞ մասին են խոսում: Նրանք չէին տիրապետում լեզվին, մինչդեռ Սահմանադրության 68-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ երեսփոխանը պետք է տիրապետեր թուրքերենին:

Այստեղ հայ պատգամավորների հայրենասիրության և նվիրվածության հարցը չէ, այլ այն, որ նրանք, քաղաքական հարցեր քննարկող այդ դահլիճում, անկարող էին գործել: Ինչ խոսք, որ կարկառուն ներկայացուցիչներ էին հանճարեղ Չոհրապը, իթթիհադական Պապիկյանը, հայ ժողովրդի նվիրյալներ Գեղամ Տեր Կարապետյանը, Փափազյանը և մյուսները, ովքեր ջանք ու եռանդ չխնայեցին հայությանը պաշտպանելու համար: Մինևույն ժամանակ տեղին է նաև մեջբերել Ա. Շարուրյանի գրքում տեղ գտած մի մատենագիտական հղում: Չոհրապի կյանքի և գործունեության տարեգրության մեջ (1996), Շարուրյանը, ի թիվս այլ հոդվածների, վկայաբերում է 1912 թվականին «Ժամանակ» թերթում Վահան Թեքեյանի մի հրապարակում՝ մեկնաբանելով, թե հեղինակը թեև անուններ չի տալիս, բայց հասկացնել է տալիս, թե ո՞ւմ մասին է խոսքը: Հոդվածի միտքն այն է, թե հայ երեսփոխանները ամեն հարց բարձրացրել են, բացի իրենց ազգից և այդ ձևով մի տեսակ վնասելով ազգին («Ժամանակ», թ. 1168, էջ 1, ըստ՝ Շարուրյան, Ա. Ս., Գրիգոր Չոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 373):

1912-1914 թվականներին անդրադառնալով, ատենախոսը նշում է, որ նշված ժամանակամիջոցում Օսմանյան կայսրությունը փաստորեն խորհրդարան չուներ (1912 հուլիս - 1914 թ. մայիս), սակայն հայազգի պատգամավորները ակտիվ գործունեություն են ծավալել (ատ. 132): Մինևույն ժամանակ, ատենախոսության էջերից ներս դարձյալ նկատելի է՝ գլխավոր դերը Ամենայն հայոց կաթողիկոսին է, Պոլսո պատրիարքին, նահանգային առաջնորդներին (ատ. 133-135): Ատենախոսն ի վերջո ամփոփում է, որ զարնանային նստաշրջանի 80 օրերի ընթացքում (մայիս-հուլիս) երբևէ որևէ անդրադարձ չի եղել հայկական բարենորոգումների հարցին. ոչ մի քննարկում, ոչ մի բողոք, ոչ մի առաջարկություն (էջ 161):

Մարտիրոսյանի կատարած հետազոտությունը ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսության լեզուն սահուն է, գիտական, ակադեմիական: Աշխատանքը շարադրված է մաքուր, ասելիքը ձևակերպված է հստակ: Ատենախոսին հաջողվել է ներկայացնել իր առջև դրված նպատակներն ու խնդիրները: Կատարվել է օգտակար մի ուսումնասիրություն, որը հնարավորություն է տալիս իրապես պատմությունից դասեր քաղել և հենվելով այս ատենախոսությանը՝ ձեռնարկել նոր հետազոտությունների, նոր հողվածների, նոր ուսումնասիրությունների շարք:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է 1908–1915 թվականներին Օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների գործունեության համապարփակ ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Նմանատիպ հետազոտություն ներկայումս բացակայում է ոչ միայն հայերեն, այլև օտար լեզուներով գիտական շտեմարաններում: Գոյություն ունեցող ուսումնասիրությունները, հիմնականում, առնչվում են առանձին պատգամավորների գործունեությանը, խորհրդարանական քննարկումներին, օրենքների ընդունման առանձին դրվագներին:

Ատենախոսությունն (196 էջ) ընդգրկում է սահմանադրական կարգի վերականգնման գործընթացը, 1909 թ. Կիլիկիայի կոտորածների խորհրդարանական արձագանքները, 1910–1912 թթ. հայ պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունները՝ քաղաքացիների իրավունքների, գույքի, հողային և զինակոչային հարցերի քննարկումները: Վերջին գլուխը վերլուծում է նրանց դիրքորոշումը և գործողությունները 1912–1915 թթ. ընթացքում՝ Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության իրադարձությունների համատեքստում:

Այսպիսով, երեք գլուխները ընդգրկում են հայերի դերը Օսմանյան քաղաքական ու քաղաքագիտական կյանքում՝ համագործակցությունից մինչև նրանցից չորս լավագույնների ոճրային սպանությունները:

Մեր ունեցած միանգամային դրական գնահատականի հետ մեկտեղ ունենք որոշ դիտարկումներ, որոնք կօգնեն ատենախոսին հետագա հետազոտություններում ու սույն աշխատանքի լրամշակումներում:

1. Աշխատանքը կշահեր, եթե խորհրդարանի քննարկումներին անդրադառնալիս դրանք շարադրվեին ոչ թե «Բիզանդիոն», «Ազատամարտ» և այլ թերթերի, ինչպես նաև մեծամասամբ հայերեն աղբյուրների հիման վրա, այլ բուն խորհրդարանական արձանագրությունների, որոնք թեպետև օգտագործել է ատենախոսը, սակայն խիստ սահմանափակ, մեջընդմեջ և առաջնային, սկզբնաղբյուրային արժեք ունեցող գրականության գործածությունը սահմանափակվել է երկրորդական, միջնորդավորված, հաճախ նաև կուսակցական ազդեցությամբ հրատարակվող աղբյուրների գործածմամբ:

2. Ատենախոսը, անդրադառնալով երիտթուրքերի և Հայ հեղափոխական դաշնակցության բանակցություններին, նշում է, որ Ահմեդ Ռիզան պահանջել է Սահմանադրության 113-րդ հոդվածի պահպանումը, որին հայերը բացաբար են

արձագանքել և հայկական կողմի պնդմամբ այն դուրս է մղվել իթթիհադ-դաշնակցություն Բանակցությունների օրակարգից: Ապա, ատենախոսը գրում է, որ հետագայում այդ հոդվածը հեռացվեց «Հասարակական ազատությունների» ենթազվիսից և այդ փոփոխությունը տեղ գտավ բոլոր քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերում (էջ 24): Շարադրանքը ճիշտ չէ: Այդ քննարկման ժամանակ Ահմեդ Ռիզան Բարձրացրել է ոչ թե 113-րդ հոդվածի, այլ սուլթանության և խալիֆայության ինստիտուտի պահպանման հարցը: Ահմեդ Ռիզան, լինելով կենտրոնացման կողմնակից, համարում էր, որ սուլթանության և խալիֆայության ինստիտուտները պետք է պահպանվեն որպես Օսմանյան միասնության հիմք: Բեդեվի Քուրանը մանրամասն ներկայացնում է այս քննարկումները, ապա հավելում, որ հայերն ասել են, թե իրենք չեն եկել սուլթանության և խալիֆայության իրավունքները պաշտպանելու, այլ՝ ճնշված ժողովուրդների ոտնահարված իրավունքները վերադարձնելու համար (Kuran, 2012, 445-446): Հայերը բացատրում են, որ ստացվում է մի պարադոքս, որի շրջանակում պատվիրակները հավաքվել էին պաշտպանելու համար մի ինստիտուտի գործունեություն, որի դեմ պայքարելու համար էին հավաքվել: Այս հատվածի առնչությամբ ատենախոսը հղել է նաև Ե. Թոփչյանի գիրքը (Երիտասարդ Թուրքիան և հայերը, 1909, էջ 135), որը թեև հրատարակվել է 1909 թվականին, ներկայացնում է առաջին սահմանադրական շրջանը և չէր կարող տեղեկություն փոխանցել Ահմեդ Ռիզայի ելույթի մասին: Ավելին, 113-րդ հոդվածը ռազմական դրության հաստատման մասին էր, և անցանկալի անձանց երկրից դուրս վտարելու առնչությամբ սուլթանին տրված բացառիկ լիազորության: 113-րդ հոդվածը պահպանվել է նաև 1908 թվականի սահմանադրության տեքստում:

3. Մինչև 30-րդ էջը հստակ տեղեկություն չկա այն մասին, թե ովքե՞ր են եղել հայոց թեկնածուները, ո՞ր կուսակցություններն ու խմբակցություններն են մասնակցել ընտրություններին: Մինչդեռ 31-32-րդ էջերում ատենախոսը քննարկում է հայ թեկնածուների միջև առկա հակասությունները, իսկ 33-34-րդ էջերում նշում, որ ընտրվել է 12 հայ երեսփոխան: Այս թիվը, սակայն, տարբերվում է ատենախոսի օգտագործած երկու աղբյուրում ներկայացված պատգամավորների թվից (տե՛ս Համբարյան, Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1979, էջ 13-14; Փափազեան, Վ., Իմ Յուշերը, Պեյրուք, 1952, հտ. 2, էջ 90-91): Կարծում ենք՝ ատենախոսը պետք է անդրադառնար այս հակասություններին, մեկնաբաներ և հիմնավորեր իր ներկայացրած ցուցանիշները: Ավելին, ատենախոսությունը կշահեր, եթե բոլոր երեսփոխանների մասին առավել առարկայական և վերլուծական անդրադարձներ ներկայացվեին: Ցանկալի կլիներ, եթե հավելվածների կամ ծանոթագրությունների տեսքով ընդգրկված լինեին նրանցից յուրաքանչյուրի հակիրճ կենսագրությունը, առնվազն՝ տրվեին ծննդյան և մահվան թվականները:

Թարգմանական, խմբագրական և այլ բնույթի դիտողություններ

4. Էջ 19-ում ատենախոսը աչառու և միակողմանի է համարել թուրք պատմաբան Զուրչերի ուսումնասիրությունը: Նշենք, որ Յուրիսերը թուրք չէ, նիդերլանդացի (Dutch) թյուրքագետ և օսմանագետ է: Մեր կարծիքով բավական անաչառ պատմաբան է, իսկ անվան տառադարձումը հայերենում, կարծում ենք՝ պետք է լինի Յուրիսեր:

5. Թերթերից արված հղումները նպատակահարմար է նշել ոչ թե 29.12.1908 ձևով (էջ 23, հղում 84, էջ 28, հղում 109 և այլն), այլ՝ նշված պետք է լինի հոդվածի հեղինակը, վերնագիրը, կամ, առնվազն՝ թերթի համարը, քանի որ նամանավանդ «Բիւզանդիոն» թերթում օգտագործված է երեք տոմար և դժվար է հասկանալ, թե ո՞ր տոմարն է մատնանշված: Տոմարային սխալ փոխարկումներ ատենախոսության մեջ հաճախ են հանդիպում: Օրինակ, *ապրիլի վեցին խորհրդարանում ընթերցվել է հայ պատգամավորների հարցապնդումը* (էջ 50), մինչդեռ այն (բնագրում՝ Taktir (تقرير) - առաջարկ) ընթերցվել է 1325 թվականի *նիսան* ամսի 5-ին, որը համապատասխանում է 1909 թվականի ապրիլի 18-ին (<https://ttk.gov.tr/tarih-cevirme-kilavuzu/>):

6. Իշխան Սափահեդդինի կուսակցության մասին խոսելիս ատենախոսն այն վկայաբերում է «Ապակենտրոնացման ու սահմանադրության օսմանյան միություն ձևով» (էջ 24): Մինչդեռ այն ունեցել է "Teşebbüs-ü Şahsî ve Âdem-i Merkeziyet" անունը, որի թարգմանությունն է «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման լիզա» (ըստ՝ Հովհաննիսյան Ա., Սափահեդդին արքայազնը և Օսմանյան ազատականության պարտությունը, Արևելագիտական ժողովածու, 2009, հմր XXVII, էջ 93-99):

Գրականության և աղբյուրների մասին դիտարկումներ

Աղբյուրներին անդրադառնալով նշենք, որ աշխատանքը կշահեր, եթե ատենախոսության մեջ օգտագործված լինեին Մատենադարանի, Ադանայի Հայոց առաջնորդարանի արխիվային հավաքածուները, Գրիգոր Կերկերյանի արխիվը: Աշխատանքը կշահեր, եթե զուգահեռներ անցկացվեին ամերիկահայ, այլալեզու և օսմաներեն մամուլի հրապարակումներում եղած նյութերի հետ, օգտագործվեին օսմաներեն փաստաթղթեր, ինչպես նաև Ֆերոզ Ահմադի (Ahmad F. (1969) *The Young Turks: The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908–1914* (Oxford: Clarendon), Արուս Յումուլի (Yumul A. (2023) *The 1908 Ottoman elections, The Historian*, 85:1, 37-52, DOI: 10.1080/00182370.2023.2347064), Սափինե Փրեթորի (Prätor S. (1993) *Der arabische Faktor in der jungtürkischen Politik: eine Studie zum osmanischen Parlament der II. Konstitution, 1908–1918* (Berlin: Klaus Schwarz), Տեր-Մաթոսյանի (Der-Matossian B. (2022) *The horrors of Adana: Revolution and violence in the early twentieth century*. Stanford University Press), Հարթմանի (Hartmann E. (2010 June) *The*

“loyal nation” and its deputies. The Armenians in the First Ottoman Parliament. In The first Ottoman experiment in democracy (pp. 187-222). Ergon-Verlag), Քայալի (Kayali H. (1995) Elections and the electoral process in the Ottoman Empire, 1876–1919. International Journal of Middle East Studies, 27(3), pp.265-286), Մորաքի (Morack E. (2021) Ottoman parliamentary procedure in the Chamber of Deputies (Meclis-i Mebusan) and the Great National Assembly of Turkey (Türkiye Büyük Millet Meclisi), 1876–1923. In Planting Parliaments in Eurasia, 1850–1950 (pp. 220-255). Routledge) ուսումնասիրությունները:

Վերոնշյալ դիտարկումները չեն նվազեցնում կատարված հետազոտական մեծ աշխատանքի արժեքը, չեն ազդում ատենախոսության ընդհանուր որակի վրա: Նաբեկ Մարտիրոսյանի ատենախոսությունը լիարժեքորեն համապատասխանում է գիտական պահանջներին: Ատենախոսության հեղինակը կարող է հավակնել Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝
պատմական գիտությունների թեկնածու Վ. Գ. Սահակյան

Պ.գ.թ. Վերա Սահակյանի ստորագրությունը հաստատում եմ

Մատենադարանի գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Վ. Հ. Թորոսյան

7.11.2025

